# Խնձորուտ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Հունան Օհանյան

Հեռ. +374 93211917

Բնակավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի հարավ-արևմտյան հատվածում, Վայքի տարածաշրջանում, մարզկենտրոնից 45 կմ հարավ-արևելք, Նախիջևան գետի աջակողմյան վտակ Ճահուկի վերնագավառում: Սահմանակից է մարզի Նոր Ազնաբերդ, Մարտիրոս, Գնիշիկ գյուղերին և Նախիջևանի Հանրապետությանը:

Գյուղը հիմնադրվել է 1827թ. ռուս-պարսկական Գյուլիստանի պայմանագրի համաձայն՝ Պարսկաստանից հայ ազգաբնակչության ներգաղթի արդյունքում: Չնայած բնակլիմայական անբարենպաստ պայմաններին (սակավաջուր, չոր կիսատափաստանային հողերի) գյուղն աստիճանաբար զարգանում է և ապահովում բնակչության աճ: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը գյուղը պատկանել է Նախիջևանի նահանգի Շարուր Դարալագյազ գավառին:

Գյուղը հիմնադրվել է 1826-1828 թթ. ռուս պարսկական պատերազմի հետևանքով Պարսկաստանի Խոյի և Սալմաստի շրջաններից գաղթած հայերի կողմից: Սակայն գյուղն ավելի հին է, քան ենթադրվում է: Այդ մասին վկայում են «Հին գյուղ» կոչվող տարածքում հայտնաբերված, 7-րդ դարով թվագրված խաչքարերը, ինչպես նաև զարդաքարերով, սրբատաշ քարերով կիսավեր կառույցները:

Գյուղը նախկինում կրել է Ալմալու անվանումը և մտել է Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառի կազմում: 1946 թ.-ի նոյեմբերի 12-ին Գերագույն Խորհրդի նախագահության որոշմամբ անվանվել է Խնձորուտ:

Խնձորուտը հարևան գյուղերից կտրված շուրջ 20 կմ-ով և թշնամու (Նախիջևանի) դեմ հանդիման ունի շուրջ 25կմ սահման:

Բնակչության հիմնական զբաղվածությունը եղել է անասնապահությունը և հողագործությունը:
Գյուղն ունի դպրոց, բուժկետ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Խնձորուտ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 10 հուշարձան: